

կու գային այդ կտրուկ դատաստաններէն: Ոչ մէկ վարպետի օրօք զանոնք ուզող: Ընկերային ձգտումներու խորարմատ պահանջ մը թելադրիչն էր այդ ամէնուն: Ու բացի Թումանեանէն, միւսներուն համար դարձեալ մէկ էր ու անփոփոխ իր դատապարտութիւնը: Մարդերէն դուրս, այս դարասկիզբի ընկերային խմորումները, մեր յեղափոխութիւնը, պահպանողական-ընկերվար ճակատումները կը գունաւորէին նոյն գորշ յատակին իր դառնութեանց ու կիրքին: Եղած էր անոնց հետ, շաբաթներով, ամիսներով, բայց ինքզինքը ի վերջոյ հիւրի մը չափ օտար, անկարելի զգալով: Կը հաւատար, թէ կը ճանչնար զանոնք, ամէն մէկը իր պարտքին անցուցած իր շահերուն պիտակը, աս ու ան հոսանքին ֆերման: Ու հաւանաբար կը խաբէր ինքզինքը, տարուելով տպաւորուելու իր դիւրութենէն, երբ կ'անցնինք ոստոստուն, անկշիռ՝ մեր շրջապատը մեր մտատախտակին վրայ առանց ամուր սեւեռելու: Ասոր համար է, որ պիտի տառապինք, մեր տպաւորութեանց վրայ խորահաւատ, բայց մեր գտածին առջեւ ալ կործանած: Ահա թէ ինչ կը նշանակէ մարդերուն քովէն ըլլալ անցած, կարծել՝ զանոնք ճանչցած, հասկցած ըլլալ ինչպէս քու մատներդ, ու զարհուրիլ, երբ ատոնցմէ մէկը ունիս անսպառելի կերպարանքին մէջ, քեզի դաւող: Անձնական կեանքով, իրենք իրենցմով հարուստ տիպարներուն ճակատագիրն է ասիկա: Ուրիշները կ'արժեն այն չափով, որչափով կ'արժէ զանոնք իր մէջ ընդունողը, այդ պահուն: Բանաստեղծներուն (բառը չունի նկատի ոտանաւորին պարզ կամ փարթամ գործաւորները, այլ այն խեղճ հովն-ետեւէն^(*)), պատրանքով հարուստ արարածները, որոնք ճակատագրուած են այդ պատրանքները ապրելու, կիներուն

(*) Հովն ետեւէն.- արկղ՝ որ կը փոխաբերէ ամէն ազդեցութեանց ենթակաները, որոնց ուղեղին տախտակներ ըլլալին թուլցած: